

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

HISTORY

ИСТОРИЯ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԿՈՆՅԱՆ*

DOI:10.57155/XQWV2857

ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՑԱԽԵՑՈՒ «ՎԱՀԱՆ ՈՒՂԱՓԱՌԱՅ»
ԵՐԿԸ ԵՎ ԴՐԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Քանակի բառեր՝ Հովսեփ Արցախեցի, բազմաթիվ միսիոներներ, Շուշի, լուսինային, բողոքականություն, Հայ Առաքելական եկեղեցի, գրաքննություն, պահպանում, սրբերի բարեխոսություն, պատկերապաշտություն:

Մաշտոցյան Մատենադարանում պահվում է 18-19-րդ դարի բանասեր, աստվածաբան, փիլիսոփա և մանկավարժ, Գանձասարի վանքի միաբան Հովսեփ Վարդապետ Արցախեցու հեղինակած երկերը պարունակող տասնչորս ձեռագիր, որոնց մի մասի գրիչը հեղինակն է կամ իր սաները: Այդ աշխատությունները փիլիսոփայական, աստվածաբանական և քերականական բնույթի են և հիմնականում կիրառվել են ուսուցողական նպատակներով:

Հովսեփ Վարդապետի երկերի շարքում խիստ հետաքրքրական է «Գիրք, որ կոչի Վահան ուղղափառաց» շատագուցակական աշխատությունը՝ գրված 1838 թ. Շուշիում՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի հորդորով: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել «Վահան ուղղափառաց»-ի ընդհանուր կառուցվածքը, բովանդակությունը և դրա հրատարակության արգելքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

* Մեղուկ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, ք. գ. թ., armine.melkonyan@yahoo.com, հոդվածը ստանալու օրը՝ 15 մայիսի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 08 հունիսի 2025:

Հովսեփ վարդապետ Արցախեցու կյանքը և գործը (համառոտ ակնարկ)

Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանի (առավելապես հայտնի որպես Արցախեցի) կյանքի վերաբերյալ սուղ տեղեկությունները քաղում ենք ժամանակակիցների հաղորդումներից, ինքնագիր ձեռագրերի հիշատակարաններից և հեղինակած երկերի առաջաբաններից¹: 19-րդ դարի գրող մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը պատմում է, որ Շուշիում գտնվելու ժամանակ (1821 թ.) հանդիպել է իր ուսուցիչ Հովսեփ վարդապետին, որը հայտնի է եղել «իմաստասէր» անվամբ: Նրա հաղորդմամբ՝ Հովսեփին Շուշի են հրավիրվել տեղի երեւելի գերդաստանները՝ իրենց ուստրերին և դուստրերին կրթելու նպատակով: Թաղիադյանը նույնպես աշակերտել է Հովսեփին՝ մասնավորապես ուսանելով փրիլսոփայություն և տրամաբանություն²: Ժամանակի նշանավոր եկեղեցական գործիչ, բանասեր Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը, որն ութ ամիս աշակերտել է Հովսեփին, նրան անվանում է «զառաջին աղբիւր լուսաւորութեան Արցախական նահանգի ի վերջին ժամանակս»³: Պատմաբան Լեոյի բնութագրմամբ Հովսեփ վարդապետը «Վանական գիտութեան-աստուածաբանութեան, տրամաբանութեան, ճարտասանութեան և քերականութեան հմուտ էր, յայտնի նաև իր կրօնաւորական կենցաղով Գանձասարի և ս. Յակոբի վանքերում»⁴: Ըստ Լեոյի, թեև Հովսեփը հրավիրվել էր Շուշի հատուկ առաքելության, երկար չի մնում այնտեղ և հիմնականում իր գիտակրթական գործունեությունը ծավալում է Գանձասարի և Սուրբ Հակոբի վանքերում: Նշվում է նաև, որ նրա համբավն այնքան մեծ էր, որ Շուշիի հարուստ ընտանիքներն իրենց երեխաներին ուղարկում էին Ս. Հակոբի վանքում ապրելու և նրանից դասեր առնելու: Լեոն նույնիսկ զրուցել է Շուշիի ծերերի հետ՝ փորձելով ավելի տեղեկություններ քաղել Հովսեփի մասին, որոնց հաղորդմամբ՝ նա «եաչէնի Ղշաղ գիւղիցն էր, վերին աստիճանի գուարճախօս էր և գինեսէր»⁵:

¹ Իհարկե, հավանական է, որ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունն ի հայտ բերի նոր փաստեր Հովսեփ վարդապետի կյանքի վերաբերյալ, ինչը, սակայն, դուրս է սույն հոդվածի շրջանակից:

² Մեսրոպ Թաղիադեանց, Ճանապարհորդութիւն Մեսրոպբայ Դ. Թաղիդեանց Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ էջմիածնի ի Հայս, հտ. 1, Կալկաթա, 1847, էջ 292-293: Հեղինակը ներկայացնում է իր և Հովսեփ վարդապետի զրույցը՝ բնութագրելով վերջինիս՝ որպես իմաստուն և հոգատար ուսուցչի, տե՛ս նույն տեղում, էջ 293-295:

³ Զալալեանց Սարգիս արքեպիսկոպոս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփլիս, 1858, էջ 355:

⁴ Լեո, Պատմութիւն Դարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 84-85:

⁵ Նույն տեղում, էջ 85:

Հովսեփ վարդապետը մահացել է 1843 թ. մարտի 1-ին և Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի (1830-1854) հրամանով թաղվել Գանձասարի վանքի հյուսիսային կողմում: Գերեզմանի վրա կա հետևյալ տապանագիրը. «Յովսէփ՝ գիտնական վարժապետ-վարդապետ էր Աւագեանց Արցախայոյ պերճ, տապան որպէս կարես, հանդուրժես, մեծն վարժապետն ի քեզ կրեալ զետեղես, զհինաւորց երախտաւորն ամփոփես, զանխօս մանկունս ի սուրբ հօրէն որբ թողես, եկա՛յք ընկերք, ո՛ր դուք մուգայք սիրասունք զհօրս զմահ յորդ արտասուօք ողբասցուք, եթէ Յիսուս զիւր Ղազարոս արտասուեաց. 1847»⁶: Ինչպես տեսնում ենք, տապանաքարի վրա նշված է 1847, մինչդեռ Լեոն վկայակոչում է Բաղդասար մետրոպոլիտի՝ 1843 թ. գրված «Յաղագս մահուան գիտնական Յովսէփ վարդապետին՝ միաբանի սրբոյ վանիցն Գանձասարու»⁷ խորագրով մի աղբյուր: Եթե Լեոյի և Մակար եպիսկոպոսի՝ տարեթվի ընթերցումներում շփոթ կամ վրիպակ չկա, բացառված չէ, որ 1847-ը տապանագրի գրություն թիվն է, ինչը նույնպես հնարավոր կլինի ճշգրտել կենսագրական մանրամասների հետագա ուսումնասիրության ընթացքում:

Մաշտոցյան Մատենադարանում Հովսեփ վարդապետ Արցախեցու հեղինակած երկերը պարունակող տասնչորս ձեռագրից մի քանիսի գրիչը հեղինակն է կամ իր սաները: Այդ երկերի մի մասը նախկինում հրատարակված աշխատությունների համառոտ՝ «հովսեփյան» օրինակներ են: Հովսեփ վարդապետը համառոտել է դրանք առավել գործնական-կրթական նպատակներով, ինչպես ինքն է բացատրում ընդարձակ խորագրերում կամ առաջաբաններում⁸: Այդ երկերն են. 1. Տեսական փիլիսոփայության դասագիրքը, որ 17-րդ դարի դոմինիկյան աստվածաբան, փիլիսոփա Անտուան Գուդանի “*Philosophia juxta inconcussa tutissimaque divi Thomae dogmata*” երկի՝ Վենետիկի Մխիթարյան հայր Վրթանես Ասկերյանի հայերեն թարգմանության⁹ մի խմբագիր տարբերակ

⁶ Բարխուտարեանց Մակար եպիս., Արցախ, Բագու, 1895, էջ 179: Պահպանել ենք հրատարակության կետադրությունը: Մակար եպիսկոպոսն այսպես է ծանոթագրում. «Այս է գիտնական Յովսէփ վարդապետի գերեզմանն, որ շատ տարիներ վարժապետութիւն արած է Արցախիս վանքերումն» (տե՛ս նույն տեղում):

⁷ Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 85:

⁸ Հովսեփ վարդապետի երկերը պարունակող ձեռագրերի ընդհանուր ֆնմությունը, առաջաբանները և բովանդակությունը տե՛ս **A. Melkonyan**, “The Literary Heritage of the Philosopher, Theologian, and Philologist Hovsep‘ Arts‘akhets‘i (18th-19th century)”, *Das Kulturelle Erbe von Arzach*, ed. **A. Muller, G. H. Harutyunyan, D. Heller, M. Tamcke**, Kiel University, 2024, էջ 511-524: Տե՛ս նաև **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 23-24:

⁹ Ասկերյանի գրական գործունեության մասին տե՛ս **Ա. Փաշայան**, «Վրթանես Ասկերյանը եւ նրա թարգմանական ժառանգությունը», *ՊԲՀ*, 2005, 3, էջ 96-102:

է: Հովսեփի խմբագրությունն առաջին մասը՝ «Տրամաբանություն»-ը, հրատարակվել է 1840 թ. Շուշիում: 2. Հովհանն Ոսկեբերանի՝ Մատթեոսի Ավետարանի մեկնության ծաղկաքաղ, ինչպես նաև այլ ավետարանական առակների մեկնություն: 3. Հայերենի քերականության դասագիրք: 4. Գրաբարի համառոտ բառարան, որը հրատարակվել է 1830 թ. Շուշիի Բազելյան միսիոներների հիմնած տպարանում¹⁰:

«Վահան Ուղղափառաց» երկը

Հովսեփ վարդապետի երկերի շարքում խիստ հետաքրքրական է «Գիրք, որ կոչի Վահան ուղղափառաց» աշխատությունը՝ գրված 1838 թ. Շուշիում՝ Կարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի հորդորով: Երկը պահպանվել է միակ ինքնագիր օրինակով (որքան մեզ հայտնի է). այն ներառված է ՄՄ 2622 ձեռագրում, որը բաղկացած է տարբեր ժամանակներում և վայրերում գրված, իրար հետ բովանդակային կապ չունեցող 15 գրչագրերից¹¹: Գրիչ-հեղինակի էջակալմամբ «Վահան ուղղափառաց»-ը 44 էջ է (թերթ 21ա-42բ)՝ գեղեցկագիր շղագրով:

Բովանդակությունից, որ համառոտակի կներկայացնենք ստորև, պարզ է դառնում, որ «Վահան ուղղափառաց»-ի հասցեատերը Արցախում հաստատված բողոքական միսիոներներն են և հատկապես Հայ Առաքելական եկեղեցու այն հետևորդները, որոնք սկսել էին համակրել և նույնիսկ անդամագրվել Լուսիերական եկեղեցուն: Դեռևս 1821 թ. Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական քարոզչական ընկերությունը քարոզիչներ է ուղարկել Անդրկովկաս՝ տեղի մահմեդականների, հրեաների և այլակրոն ժողովուրդների շրջանում քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով¹²: 1822 թ. Ալեքսանդր Ա ցարից նրանք ստանում են քարոզելու, դպրոցներ և տպարաններ հիմնելու իրավունք¹³: Շուրջ

¹⁰ Բառարանի համառոտ ֆննդությունը տե՛ս Ն. Պողոսյան, Հայ բառարանագրության պատմության գրվագներ, պրակ Ա, Երևան, 2016, էջ 92–94:

¹¹ Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, 2013, էջ 751–768:

¹² Տե՛ս Ա. Մանուկեան, «Պազելի աւետարանական փարոզչական ընկերութիւնը եւ հայերը (1823–1835)», *Das Armenische Kulturerbe in Berg-Karabach/Arzach und die Deutschen*, խմբ.՝ M. Tamcke et al., Universitätsverlag Göttingen, 2021, էջ 85–100, նույնի՝ «Պազելի Աւետարանական փարոզչական ընկերութեան տան կառուցումը Շուշիի մէջ», *Das Kulturelle Erbe von Arzach*, խմբ. A. Müller, G. H. Harutyunyan, D. Heller, M. Tamcke, Kiel University, 2024, էջ 174–187, Հ. Ղուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886:

¹³ Բողոքական փարոզիչների՝ Շուշիում ծավալած կրթական, հրատարակչական գործունեության մասին մանրամասն տե՛ս Ս. Պետոյան, «Շուշիում բազելյան բողոքական փարոզիչների հաստատումը եւ տպարանի հիմնադրումը», *Եվրոպական համալսարան. գիտական հոգված-*

10 ամիս Աստրախանում սովորում են հայերեն, պարսկերեն և թուրքերեն և ի վերջո, հաստատվում են Շուշիում՝ հաշվի առնելով նաև քաղաքի աշխարհագրական կարևոր դիրքը, որտեղից հնարավոր կլիներ քարոզել ոչ միայն անդրկովկասյան տարածաշրջանում, այլև Պարսկաստանի և Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում¹⁴։ Թեև միսիոներները սկզբնապես նպատակ են ունեցել քարոզելու Անդրկովկասի հեթանոսներին և մուսուլմաններին, նրանց ուշադրությունը շուտով սեփուկում է տեղի հայ ազգաբնակչության ուղղությունը՝ փորձելով նրանց ընդգրկել մահմեդականների քրիստոնեացման գործում։ Այսպես, շատ հայեր, այդ թվում, հոգևոր դասի ներկայացուցիչներ, սկսում են համակրել և հետևել նրանց, ինչն էլ բացասական արձագանք է ստանում Մայր Աթոռում¹⁵։

Նիկոլայ Ա-ի 1835 թ. օգոստոսի 23-ի հրամանագրով դադարեցվում է միսիոներների գործունեությունը Ռուսական կայսրության սահմաններից ներս։ 1838 թ. ապրիլին բազելյան առաքելության վերջին միսիոներ՝ Ֆելիցիան Զամբան (Felician Martin Graf Zarembo-Kalinowskij) հեռանում է Շուշիից¹⁶։

Հովսեփ վարդապետի՝ խնդրո առարկա երկի տիտղոսաթերթին կարդում ենք. «Գիրք, որ կոչի Վահան ուղղափառաց։ Յորում աւանդին նախ՝ բանք զպնդութենէ պահոց, երկրորդ՝ բանք զճշմարտութենէ բարեխօսութեան ամենայն սրբոց Հնոց եւ Նորոց, երրորդ՝ զընդունելութենէ եւ զերկրպագութենէ պատկերաց՝ հաստատեալ վկայութեամբք Աստուածաշունչ Սուրբ Գրոց։ Ի հայրապետութեան Տեառն Յովհաննու արժանընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց և ասպետի։ Հրամանաւ և ծախիւք աստուածարեալ առաքելաշաւիղ վիճակաւոր առաջնորդի և մետրոպոլիտի Հայոց Ղարաբաղու և այլոց՝ տեառն Բաղտասարայ իշխանազնեայ Հասան Զալալեան սրբազան արքեպիսկոպոսի և ասպետի։ Յորդորմամբ վերոյ իշեալ արհույն՝ հաւաքեալ բանք նուաստագոյն Յովսէփայ Սեւորի Արցախեցոյ, ի միաբանութենէ սրբոյ վանացն Գանձասարու, ի Շուշի։ 1838 ամի Տեառն, ՌՄՁԷ.»¹⁷։

Տիտղոսաթերթին արդեն իսկ նշված են աշխատության բուն մասերը և քննարկվող հիմնական թեմաները՝ պահք, սրբերի բարեխոսություն և պատկերներ

ների ժողովածու, 2019, 10 (02), էջ 372–384, նույնի՝ «Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին», *ԲՄ*, 30, 2020, էջ 302–316, նույնի՝ «Բազելյան բողոքական ֆարոգիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835)», *Հայագիտության հարցեր*, 2021, 1, էջ 45–65։

¹⁴ Ա. Մանուկեան, «Պապեղի աւետարանական ֆարոգչական ընկերութիւնը եւ հայերը (1823–1835)», էջ 88։

¹⁵ Տե՛ս Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838–1913, էջ 93–95։

¹⁶ Տե՛ս Ա. Մանուկեան, «Պապեղի Աւետարանական ֆարոգչական ընկերութեան տան կառուցումը Շուշիի մէջ», էջ 185։

¹⁷ ՄՄ 2622, 21ա։

րի երկրպագություն, որ, ըստ ամենայնի, եղել են Հայ Առաքելական և Լութերական եկեղեցու հետևորդների միջև ծագած հիմնական դավանաբանական, ծիսապաշտամունքային տարաձայնությունները:

Առաջին՝ «Յաղագս Պահոց» գլուխը (21ա-29ա) հեղինակն սկսում է Մատթեոսի Ավետարանով. «Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ապա քաղցեալ» (Դ. 2), այնուհետև ներկայացնում և վերլուծում պահքին վերաբերող այլ տեղիներ Հին և նոր Կտակարաններից: Նա հիմնվում է բացառապես Ս. Գրքի վրա և եկեղեցու հայրերին չհղելը բացատրում այն հանգամանքով, որ բողոքականների համար հայրերը հեղինակություն չեն, և որ, ինչպես իրենք են ասում. «հայրապետն ինձ նման մին մարդ էր»¹⁸: Նա մանրամասնորեն բացատրում է, թե ինչ է պահքը և որոնք են այն ուտելիքները, որոնցից պետք է հրաժարվել. «Զօրեղ կերակուրք են միսն և ի մսոյ ելեալ կաթն՝ պանիրն, մածունն, հաւն և ի հաւէ ելեալ ձուն, և այլ ամենայն իւղք»¹⁹: Պահքի կարևորությունն անտեսողներին և այն խախտողներին Արցախեցիին դիմում է «Տեսե՛ր, ով դո՛ւ, նենգաւոր պասակեր», «Տեսե՛ք, սիրելի՛ պասակերք...» կամ «ո՛վ երանելի պասակեր...» հեզնական արտահայտություններով: Նա ավելի մեծ մեղք է համարում ոչ թե պահքը խախտելը, այլ այդ խախտումն արդարացնելն ու մեղք չհամարելը՝ հակասելով Լութերականների այն պնդմանը, թե կերակուրը մարդուն պղծել չի կարող: Այս առումով, բնագիրը կարող է հետաքրքրական լինել նաև եկեղեցական ծեսերի և բարեպաշտական սովորույթների վերաբերյալ 19-րդ դարում և որոշակի միջավայրում հասարակական մոտեցման ուսումնասիրման տեսանկյունից: Հատկապես, ուշագրավ է, թե ինչպես կարող են կրոնածիսական որոշ պատկերացումներ փոխվել այլ մշակույթների հետ ծանոթացումից, տվյալ դեպքում բողոքականների հետ սերտ շփումից²⁰: Բացատրելով, որ պահքը բնորոշ է առհասարակ բոլոր «ուղղափառ» քրիստոնյաներին՝ Հովսեփ վարդապետը նույնիսկ համեմատում է այլ եկեղեցական ավանդույթների հետ՝ ընդգծելով, որ հայկական պասքը դեռևս ավելի թեթև է, քան օրինակ հույներինը, որոնց Սուրբ Ծննդյան պահքը տևում է 40 օր, ի տարբերություն Հայ Առաքելական եկեղեցու սահմանած 7 օրվա: Հովսեփ վարդապետը թվարկում է պահքի տեսակները. «ծոմապահութիւն, յուխտապահութիւն, յիսնապահութիւն, ի հասարակ պահս, ի

¹⁸ Նույն տեղում, 24բ:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Ուշագրավ է, որ Հովհաննես վրդ. Շահխաթունյանցը Մայր Աթոռի Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամներին 1830 թ. ուղղված մի գրության մեջ շեշտում է, թե բողոքականները եկեղեցու բոլոր խորհուրդները չեն ընդունում, և արհամարհում են ծուրապահությունը. տե՛ս ԱՅօ, Պատմութիւն Արարադի Հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838-1913, էջ 94:

մշտապահութիւն կամ ի գերապահութիւն»²¹, և բացատրում դրանցից յուրաքանչյուրի նշանակութիւնը: Հեղինակը տարանջատում է հոգևոր և մարմնական պահքը. «Հոգեկան պահքն է, որ հաւատացեալք պահեն զինքեանս ի հպարտութենէ, ի նախանձուէ, յանշահ բարկութենէ, ի ծուլութենէ, յոխակալութենէ և ի բամբասանաց կամ յագահութենէ: Իսկ մարմնական պահք, յորոց պարտի հաւատացեալն պահել զինքն, են որկրամոլութիւն, իգամոլութիւն, արուամոլութիւն, ազգապղծութիւն եւ շատակերութիւն»²²: Պահքին նվիրված հատվածը եզրափակվում է աղոթք-մաղթանքով. «զի ծագեսցէ զլոյս շնորհաց պահեցողութեան ի սիրտս պասակերաց եւ խափանեսցէ զբռնութիւն որովայնամոլութեան նոցա»²³:

Երկրորդ՝ «Յաղագս բարեխօսութեան սրբոց» գլխում (29ա-39բ) բարեխօսության էությունը և սրբերի միջնորդությամբ երկնային դատավորի ներողամտության հայցումը բացատրելու համար Հովսեփ Արցախեցին կատարում է շոշափելի մի համեմատություն՝ աշխարհիկ դատավորի առջև նրա մտերիմների միջնորդությունը հանցավորի հանցանքները ներելու համար. «Եթէ գոյ մարմնաւոր դատաւոր, ապա գոյ և հոգևորն, զի պատկեր և օրինակ մարմնաւոր դատաւորութեան է ըստ ամենայնի նշանակ հոգևորական դատաւորութեան: Զորօրինակ՝ եթէ ուրուք ի մարդկանէ լինիցին յանցանք ինչ, ապաւինեալ ի մարդիկս, որք են ի դրան դատաւորին, պաղատի եւ աղաչէ զնոսա, բարեխօս լինիլ առ դատաւորն, զի ի պատիւ երեսաց արանցն, դատաւորն թողցէ եւ ներեսցէ յանցանաց յանցաւորին: Նոյնպէս եւ մեք, ունելով զբիրակերպ տեսակ մեղաց, պարտիմք ի մէջ սուրբ եկեղեցւոյ պաղատիլ արտասուօք եւ աղաչել զսուրբս Աստուծոյ, զի վասն բարեխօսութեան նոցա թերևս գթասցի ի մեզ Աստուած եւ ներեսցէ յանցանաց մերոց»²⁴: Այս գլխում նույնպես նա ներկայացնում է տարբեր օրինակներ Սուրբ Գրքից, երբ մարգարեների շնորհիվ Աստված ներում է շնորհում իր ժողովրդին: Ինչպես մյուս, այնպես էլ բարեխոսություն հարցը քննելիս, Հովսեփը նախևառաջ ներկայացնում է լուծերականների տեսակետը, այնուհետև մեկնաբանում Հայ եկեղեցու մոտեցումը, ինչպես օրինակ. «Լուծերականք բարբանջեն, թէ սուրբք յաննիւթական կայանս իւրեանց լինելով, յոյժ հեռի են ի մէնջ, ուստի և աղաչանք մարդկան ոչ հասանեն առ նոսա»²⁵: Արցախեցին դիտարկում է բարեխոսությունը՝ որպես առհասարակ աղոթք ուրիշների համար,

²¹ ՄՄ 2622, 26ա:

²² Նույն տեղում:

²³ ՄՄ 2622, 29ա:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, 30ա:

խոսում նաև «անընմիջաբար» աղոթքի մասին, երբ յուրաքանչյուրն աղոթում է միմիայն իր անձի համար: Այս առթիվ նա գրում է. «Հաւատացեալք ունին զերկոսին տեսակս ևս, իսկ լուծերականք և մահմետականք զանընդմիջաբար աղոթելն առ Աստուած միայն»²⁶: Ուշագրավ է, որ Հովսեփ վարդապետն ուղղափառ քրիստոնյաներին կոչում է «հաւատացեալք», և անդրադառնում ոչ միայն լուծերականներին, այլև մահմեդականներին: Ընդ որում, «ուղղափառ» ասելով նա նկատի ունի ոչ միայն Հայ, այլև Ռուս ուղղափառ և Լատին եկեղեցիները, ինչպես նշում է Բարեխոսությանը նվիրված գլխում. «Սոյնպէս լինին և Բարեխօսութեանց տօնակատարումն յայլ ամենայն եկեղեցիս ուղղափառաց, այսինքն՝ Ռուսաց և Լատինացոց քրիստոնէից, թէպէտ յայլևայլ աւուրս կամ յայլևայլ շաբաթս մեք զնոցայն կատարեմք եւ նոքա զմերն»²⁷:

Վերջին՝ «Յաղագս պատկերասիրութեան և պատկերատեսցութեան» գլխում (39բ-42բ) Հովսեփ Արցախեցին պատկերների երկրպագությունը բաժանում է երկու տեսակի՝ պախարակելի կռապաշտական, ինչպես օրինակ՝ ոսկե հորթի պաշտամունքը²⁸, և այն ընդունելի պատկերները, որոնք Աստված հրամայեց Մովսեսին, ինչպես՝ խորանի երկու կողմերի ճախրող ոսկյա քերովբեները²⁹: Նա փորձում է համոզել իր իսկ բնորոշմամբ պատկերատյացներին, որ ուղղափառները պաշտում են ոչ թե պատկերը, այլ պատկերվածին: Արցախեցին բերում է նաև այնպիսի պատկերների օրինակներ, որոնք ո՛չ պատվելի են և ո՛չ էլ անարգելի, ինչպես՝ բարձր շինությունների զարդերը, սյուները, կոթողները, մարդկանց, թռչունների, առյուծի, ձիավորի պատկերները, ինչպես նաև տապա-նաքարերի պատկերները:

«Վահան ուղղափառաց»-ի գրաֆննությունը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Բազելյան քարոզիչների Շուշիում գործունեության դադարից հետո Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը գնում է Շուշիում նրանց հիմնած տպարանը և ծավալում գրահրատարակչական գործունեություն³⁰: Սակայն, այս կամ այն հատորի հրատարակության արտոնությունը Բաղդասար մետրոպոլի-

²⁶ Նույն տեղում, 39բ:

²⁷ Նույն տեղում, 37ա:

²⁸ Հմմտ. Ելից ԼԲ 4:

²⁹ Հմմտ. Ելից ԻԵ 18:

³⁰ Մանրամասն տե՛ս Ս. Պետոյան, «Բաղդասար արհեստագործական Հասան-Ջալալյանը եւ Շուշիի հայկական տպագրությունը», *Էջմիածին*, 2021, է (հուլիս), էջ 88-102:

տը³¹ պետք է ստանար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր Սինոդից³²: Այսպես, 1838 թ. Հասան-Ջալալյանն իր իսկ հորդորով և պատվերով գրված «Վահան ուղղափառացն» ուղարկում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ բովանդակությունը քննելու և հրատարակության թույլտվություն ստանալու համար: Նույնմբերի 5-ին ուղարկված և նույնմբերի 28-ին ստացված գրություն մեջ կարդում ենք. «Առաքելով ընդ սմին ի բարենկատ հայեցողութիւն սրբազան Սինոդոսիդ Էջմիածնի զգրքոյկն, կոչեցեալ «Վահան ուղղափառաց», աշխատասիրեալն ի Յովսէփայ գիտնական Վարդապետէ Տէր-Աւագեան Արցախեցոյ՝ միաբանէ Սրբոյ վանիցն Գանձասարու, խնդրեմ ի Սինոդոսէդ զկնի քննութեան այնորիկ, եթէ ինչ ո՛չ գտցի ի նմին հակառակ դաւանութեան ուղղափառ եկեղեցւոյն մերոյ անդրադարձուցանել առ իս վաղվաղակի հրամայելով, զի տպագրեսցի այն ի տպարանի վիճակիս: Վիճակաւոր առաջնորդ Ղարապաղու և այլոց՝ մետրապօլիտ Բաղդասար»³³:

Սինոդի 1838 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ «Վահան ուղղափառաց»-ի գրաքննությունը հանձնարարվում է ժամանակի հայտնի գրական գործիչ, Էջմիածնի մատենադարանապետ Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցին³⁴: Շահխաթունյանցը պատասխանում է շուրջ մեկ տարի անց, 1839 թ. հոկտեմբերի 20-ին: Նա երկը բնորոշում է՝ որպես «գտետրակն ընդդիմախօսութեան ինչ ինչ բանից ոմանց աղանդաւորացն Մարտին Լուտերի»³⁵, և եզրակացնում, որ այն համապատասխանում է սուրբ եկեղեցու վարդապետությանը և Հայ եկեղեցու ծեսին. «ուշիւշով ընթերցայ զայն և նկատեցի ըստ իմում կարի, և ահա ոչ ինչ գոյ ի նմա հակառակ ողջամիտ վարդապետութեան եկեղեցւոյ սրբոյ, և ոչ

³¹ Բաղդասար Հասան-Ջալալյանը 1830 թ. եփրեմ Զորագեղցի կաթողիկոսի կողմից նշանակվել էր մետրոպոլիտ «բոլոր Աղուանից Հայոց»: Երբ 1836 թ. «Պոլոժենիեի» հաստատմամբ ստեղծվեց Ղարաբաղի թեմը, Բաղդասարը դարձավ թեմի առաջնորդ՝ պահելով մետրոպոլիտի կոչումը, տե՛ս Վ. Դիլոյան, «Հասան-Ջալալյան Բաղդասար», Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 569:

³² Ս. Պետոյան, «Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը եւ Շուշիի հայկական տպագրությունը», էջ 97-98: Գրաֆնոսթյան էին ենթարկվում նաև բողոքական միսիոներների հրատարակած գրքերը, տե՛ս Ս. Պետոյան, «Բաղեյան բողոքական բարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)», էջ 50:

³³ Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Ի. Սուրբ Էջմիածինը և Հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912-1913 թթ., փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի), կազմ.՝ Գ. Աւագեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019, էջ 376-377:

³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 437, թ. 2 եւ շրջ: Խորին շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող, Ստյոպա Պետոյանին՝ փաստաթղթերի թվային օրինակը տրամադրելու համար:

³⁵ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 437, թ. 3:

արարողութեանց և ծիսից Հայաստանեայցս եկեղեցւոյ»³⁶: Նրա մատնանշած միակ խնդրահարուց տեղին «Վահան»-ի էջ 36 և 37-ում Հիսուսի՝ Մարիամին ուղղված «Զի՞ կայ իմ և քո, կին դու, զի չե է հասեալ ժամանակ իմ» (Հովհ. Բ 4) խոսքի՝ Հովսեփ վարդապետի մեկնաբանությունն է, մասնավորապես՝ «կին դու» արտահայտության: Ըստ Հովսեփի՝ «յասելն Քրիստոսի՝ կին դու, ցուցանէ, թէ որովհետեւ ոչ իմացար թէ ես ինքն հանդերձեալ էի ի մէջ բազմութեան արանց և կանանց առնել սքանչելիս, դու բնութեամբ եղեր անհամբեր և կարճամիտ նման կանանց հասարակաց»³⁷: Շահխաթունյանցը «Վահան»-ի բնագրում որևէ նշում չի արել, սակայն այս նախադասությունն ամբողջությամբ մեջբերել է Սինոդին ներկայացրած իր կարծիքի մէջ: Ըստ ամենայնի, չընդունելով Աստվածամորը տրված «անհամբեր և կարճամիտ նման կանանց հասարակաց» բնորոշումը, Շահխաթունյանցը գրում է, որ այս հարցին հենց Հիսուսն ինքն է պատասխանել՝ ասելով. «առ փառաւորութեան իմոյ հրաշագործութեամբ տակաւին ոչ է հասեալ ժամանակն» (հմմտ. Հովհ. Բ 4), ինչպես նաև բազմաթիվ հեղինակներ³⁸: Գրաքննիչ Հովհաննէս վրդ. Շահխաթունյանցի կարծիքը «Վահան»-ի վերաբերյալ, ըստ էության, դրական էր, իսկ այս փոքր խնդրահարուց տեղին՝ միանգամայն խմբագրելի և փոփոխելի: Այդուհանդերձ, Սինոդի անդամները չեն արտոնում երկի տպագրությունը՝ համարելով, որ այն «ըստ արժանաւորութեան գրուածոցն ոչ համապատասխանէ նպատակին», ուստի և «Սինոդոս ըստ ամենայնի անօգուտ համարի տպել զայն, ևս և անվայել իսկ միանգամայն»³⁹: Ի վերջո, որոշվում է «Վահան»-ը հանձնել էջմիածնի մատենադարանապետին՝ հրամայելով այն պահել գրատանը՝ «ի շարս արգելեալ մատենից»⁴⁰: Ընդ որում, Սինոդի անդամները նախ որոշել են այն վերադարձնել Ղարաբաղի կոնսիստորիային, ինչպես ակներև է փաստաթղթի ջնջված նախադասությունից («ուստի վերադարձնել զայն ի Կոնսիստորիայն Ղարաբաղու»)՝⁴¹, այնուհետև մտափոխվել են և գրել «և առաքել զայն առ վերատեսուչն մատենադարանին էջմիածնի»՝ հավանաբար, մտավախություն ունենալով, որ Բաղդասար մետրոպոլիտը կարող էր այնուամենայնիվ հրատարակել երկը⁴²:

³⁶ Նույն տեղում:

³⁷ ՄՄ 2622, 39ա (գրչի էջակալմամբ՝ էջ 37):

³⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 437, ք. 3:

³⁹ Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ի, էջ 398:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 437, ք. 3:

⁴² Ինչպես նկատել է Ս. Պետոյանը, «Վահան»-ը քյուրիմացաբար նշվել է Շուշիում հրատարակված գրքերի շարքում, տե՛ս «Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը եւ Շուշիի հայկական տպագրությունը», էջ 101:

Այդուհանդերձ, ինչո՞ւ մերժվեց «Վահան ուղղափառաց»-ի հրատարակությունը, հատկապես գրաքննիչի՝ ընդհանուր առմամբ դրական պատասխանի պարագայում: Արդյո՞ք «անօգուտ» համարելու պատճառներից մեկն այն էր, որ բողոքական միսիոներներն արդեն դադարեցրել էին իրենց գործունեությունը Շուշիում և երկի տպագրությունն այլևս ժամանակավրեպ էր: Մյուս կողմից, եթե 1838 թ. Արցախի թեմի առաջնորդի հանձնարարությամբ գրվել է նման երկ, նշանակում է, որ արժարժված թեմաների բարձրաձայնումն առնվազն կարևոր է եղել: Կարելի է ենթադրել նաև, որ թեև բողոքականներն այլևս Շուշիում չէին գործում, սակայն նրանց գաղափարները տարածում էին գտել հավատավորների շրջանում, և մասնավորապես արժարժված հարցերի վերաբերյալ ունեցել են համակիրներ: Իհարկե, բացառված չէ, որ Հովսեփի վարդապետն ավելի վաղ է սկսել գրել իր աշխատությունը (այսինքն՝ երբ դեռ բողոքական քարոզիչները Շուշիում էին), սակայն ավարտել և հրատարակության է հանձնել միայն 1838 թ.:

Հովսեփի վարդապետ Արցախեցու «Վահան ուղղափառաց» երկն ուշագրավ է հատկապես 19-րդ դարում Շուշիում հաստատված բողոքական միսիոներների և Հայ Առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների, արցախահայերի կրոնաժխտական կյանքի, ինչպես նաև միջդավանաբանական, միջկրոնական հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից, ինչը և նախատեսում ենք իրագործել առաջիկայում, բնագրի պատրաստման և հրատարակության ընթացիկ աշխատանքն ավարտելուց հետո:

ARMINE MELKONYAN

THE SHIELD FOR THE ORTHODOX BY HOVSEP' VARDAPET ARTS'AHKETS'I AND THE PROHIBITION OF ITS PUBLICATION

Keywords: Hovsep' Arts'ahkets'i, Basel Missionaries, Shushi, Lutheranism, Protestantism, Armenian Apostolic Church, censorship, fasting, intercession of saints, worship of images.

The 18th-19th century philosopher, theologian, philologist and a monk of the Gandzasar Monastery, Hovsep' vardapet Arts'ahkets'i, wrote his apologetic treatise *Shield of the Orthodox* at the behest of the primate of the Karabakh diocese, Metropolitan Baghdasar Hasan-Jalalyants'. The *Shield* was addressed to members of the Armenian Apostolic Church who sympathised with or followed Lutheranism, as well as to the representatives of the Lutheran Church. The Basel missionaries, who were established in the city of Shushi in the 1820s, were originally oriented towards

preaching to Muslims, Jews, and peoples of other religions in Transcaucasia. However, they soon turned their attention to the local Armenian population, trying to involve them in the Christianization of Muslims.

The *Shield* consists of three chapters: 1. On Fasting, 2. On the Intercession of Saints, 3. On Love (respect) and Hate of icons. The author criticises the Lutherans, responding to their accusations and clarifying the position of the Armenian Church on the mentioned themes. He sometimes refers to the traditions of the Greek Orthodox, Russian Orthodox and Catholic churches, as well as to Muslims.

In November 1838, Metropolitan Baghdasar sent the *Shield* to the Synod of the Mother See of Holy Etchmiadzin to request permission to publish it. About a year later, Hovhannes Vardapet Shahkhat'unyants', who had been entrusted with censoring this work, provided the Synod his positive review, making only one non-essential observation.

Ultimately, however, the Synod did not authorise the printing of the *Shield* and instead handed it over to the Mother See library as a prohibited book. The autograph, which was written in Shushi in 1838, is currently housed at the Mashtots' Matenadaran.

АРМИНЕ МЕЛКОНЯН

«ЩИТ ПРАВОСЛАВНЫХ» ОВСЕПА ВАРДАПЕТА
АРЦАХЕЦИ И ЗАПРЕТ НА ЕГО ПУБЛИКАЦИЮ

Ключевые слова: *Овсеп Арцахеци, базельские миссионеры, Шуши, лютеранство, протестантизм, Армянская Апостольская Церковь, цензура, пост, почитание святых, поклонение иконам.*

Философ, богослов, филолог и монах Гандзасарского монастыря XVIII-XIX вв. вардапет Овсеп Арцахеци написал свой апологетический трактат «Щит православных» по указанию предстоятеля Карабахской епархии митрополита Багдасара Гасана-Джалалянца. «Щит» был адресован членам Армянской Апостольской Церкви, которые симпатизировали или склонялись к лютеранству, а также представителям протестантской церкви. Базельские миссионеры, обосновавшиеся в городе Шуши в 1820-х годах, изначально ориентировались на проповедь мусульманам, иудеям и представителям других религий Закавказья. Однако вскоре они обратили свое внимание на местное армянское население и попытались привлечь его к христианизации мусульман.

«Щит православных» состоит из трех глав: 1. «О посте», 2. «О почитании святых», 3. «О любви (уважении) и ненависти к иконам». Автор критикует лютеран, отвечая на их обвинения и разъясняя позицию Армянской церкви по указанным темам. Иногда он обращается к традициям Греческой Православной, Русской Православной и Римско-Католической церквей, а также мусульман.

В ноябре 1838 года митрополит Багдасар отправил «Щит» в Синод Первопрестольного Святого Эчмиадзина с целью получить разрешение на его публикацию. Примерно через год Ованес Вардапет Шаххатунянц, которому была поручена цензура этого труда, предоставил Синоду свой положительный ответ, сделав лишь одно несущественное замечание. Однако Синод не разрешил печатать «Щит православных» и передал его в первопрестольную библиотеку как запрещенную книгу. Автограф, написанный в Шуши в 1838 году, в настоящее время хранится в Матенадаране имени Месропа Маштоца.